

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»
ՎՊՄԻ-ի ռեկտոր
Խաչատրյան Գ.Կ.
« 20 » 09 2012թ.

**«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ» Պետական ոչ առևտրային կազմակերպության
կրթության որակի ապահովման
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

Ընդունվել է՝ ՎՊՄԻ գլխավորի որոշում
(արձանագրություն թիվ 8 «_20_» 09 2012 թ.)

Բովանդակություն

1. Ներածություն _____ 3
2. Կրթության որակի ապահովման համակարգի ներկա իրավիճակը _____ 3
3. Կրթության որակի ապահովման համակարգի սկզբունքները, առաքելությունը, նպատակը և խնդիրները _____ 6
4. Կրթության որակի ապահովման համակարգի չափորոշիչները _____ 8

1. Ներածություն

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) հիմնական նպատակներից մեկը բոլոր մակարդակի կրթական ծրագրերի բարձր որակի ապահովումն է: Գիտակցելով, որ դասավանդման որակը կապված է դասախոսների գիտական գործունեության հետ, ինստիտուտը ձգտում է զարգացնել գիտական հետազոտությունները կրթական գործունեության բոլոր ուղղություններով: Ինստիտուտն իրականացնում է որակի պահովման ներքին քաղաքականություն՝ ուղղված նրան, որպեսզի շնորհները, վկայականները և կրթության վերաբերյալ ինստիտուտի կողմից տրվող այլ փաստաթղթեր բարձր գնահատվեն գործատուի կողմից:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար ինստիտուտն օգտագործում է որակի ապահովման համակարգ, որը հիմնված է բուհերի համար ավանդական դարձած որակի վերահսկման տարրերի և Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի կողմից մշակված չափորոշիչների ու երաշխավորագրերի համադրության, ինչպես նաև Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից մշակված չափորոշիչների վրա:

2. Կրթության որակի ապահովման համակարգի ներկա իրավիճակը

Ինստիտուտի որակի ներքին ապահովման ուղղությամբ աշխատանքները շարունակական բնույթ են կրում, որի վկայությունն է 2009-2010 ուսումնական տարում ստեղծված Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ԿՈԱԿ): ԿՈԱԿ-ի հիմնական գործունեությունը ուղղված է որակի ապահովման քաղաքականության մշակմանը: Ելնելով բուհի ռազմավարությունից՝ ստեղծվել է բուհի կրթության որակի ապահովման կենտրոնի հայեցակարգը, կանոնակարգը և մշակվել մի շարք ընթացակարգեր:

Ինստիտուտի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին խոչընդոտները և ներքին հնարավորությունները, ինչպես նաև առանձին ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերով նախանշված կոնկրետ միջոցառումները ներկայացված են SWOT-մատրիցայի տեսքով:

Ուժեղ կողմերը

- Մրցունակության բարձր մակարդակը և բուհի դրական վարկանիշը՝ ՀՀ կրթական ծառայությունների շուկայում
- Մենաշնորհային դիրք տարածաշրջանում մանկավարժության ոլորտի մասնագիտությունների գծով
- Ինստիտուտում ձևավորված ակադեմիական ավանդույթները
- Դինամիկ կերպով զարգացող կայուն ֆինանսական վիճակը
- Նյութատեխնիկական բազայի որոշակի մակարդակը:
- Կրթական ռեսուրսների մշտադիտարկման և կառավարման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակտիվությունը՝ գիտական գրականության հրատարակման գործում
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի որակի գնահատման և բարձր արդյունքների ձեռքբերման համար նյութական խրախուսման համակարգի առկայությունը
- Ուսումնամեթոդական գրականությամբ և տեղեկատվական ռեսուրսներով ապահովվածության բավարար մակարդակ,
- գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող դասախոսների բավարար մակարդակ:

Թույլ կողմերը

- Ուսանողների թվաքանակի նվազում
- Ինստիտուտի մասնագիտությունների միակողմանի ուղղվածություն, ինչը խոչընդոտում է կրթական գործունեության կազմակերպման նկատմամբ ՀՀ գիտության և կրթության նախարարության և աշխատաշուկայի պահանջների փոփոխման նկատմամբ ճկունության դրսևորումը
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսումնաօժանդակ աշխատակազմի որակավորման բարձրացման համակարգի բացակայություն
- Կիրառական բնույթի արդիական գիտական թեմաների մշակման գործում այլ կազմակերպությունների հետ աշխատելու ներուժի թույլ օգտագործում
- Ինստիտուտում որակավորման բարձրացման ֆակուլտետի բացակայություն:

Հնարավորությունները

- Ուսանողների, դասախոսների ակադեմիական շարժունակության մակարդակի բարձրացում
- Բուհի կառավարման համակարգի կատարելագործում
- Կրթության, գիտության և աշխատաշուկայի ինտեգրման արդյունավետության բարձրացում
- Կրթական գործունեության ընդլայնում և վերափոխում՝ համաձայն գործատուների պահանջների,
- Ինստիտուտի կրթական գործընթացներում կրթության կառավարման և կրթական նորարարական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորություն
- Ուսումնական և կառավարման ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառություն
- Մենաշնորհային դիրքի ապահովում՝ ոչ մանկավարժական մի շարք մասնագիտությունների գծով:

Ուժեղ կողմերն օգտագործելուն ուղղված միջոցառումներ՝ հնարավորությունների ընդլայնման նպատակով

- Գործատուների ներգրավում մրցունակ մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի մշակման գործընթացներում
- Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման և վերաորակավորման արդյունավետության գնահատման բազմակողմանի համակարգի ձևավորում
- Գիտության և կրթության կապի ընդլայնում և խորացում
- Գրադարանային-տեղեկատվական ցանցի արդիականացում և ընդլայնում
- Ինտերնետ-կապի հզորության ավելացում
- Բուհի ինստիտուցիոնալ հավաստագրում և կրթական ծրագրերի հավաստագրման պայմանների ձևավորում
- Ուսանողների համար կրթական ռեսուրսների և ինքնակրթության տեխնոլոգիաների մատչելիության պայմանների ապահովում:

Ուժեղ կողմերի օգտագործելուն ուղղված միջոցառումներ՝ սպառնալիքներից խուսափելու նպատակով

- ՀՀ-ում ինստիտուցիոնալ հավաստագրման ապահովում
- Ինստիտուտի ռազմավարական ծրագրերին համապատասխանող զարգացում
- Ուսումնական գործընթացում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման ապահովում
- Ոչ նյութական խրախուսման համակարգի զարգացում
- Աշխատաշուկայի կարիքների մոնիթորինգի համակարգի ստեղծում՝ շրջանավարտներին աշխատաշուկայում կողմնորոշելու նպատակով:

Թույլ կողմերի ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ սպառնալիքներից խուսափելու նպատակով

- Հարմարվողական կորպորատիվ մշակույթի ձևավորում
- Շրջանավարտների պատրաստմանն ու մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների ձևերի և մեթոդների ընդլայնում
- Հասարակայնության համար Ինստիտուտի գործունեության թափանցիկության ապահովում
- «Բուհ-դպրոց» հետադարձ կապերի ապահովում, զարգացում և ընդլայնում:

3. Կրթության որակի ապահովման համակարգի սկզբունքները, առաքելությունը, նպատակը և խնդիրները

3.1. Ինստիտուտի կրթության որակի ապահովման համակարգը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- 3.1.1. Ինստիտուտը պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրվող կրթության որակի համար:
- 3.1.2. Ինստիտուտը երաշխավորում է պետական կրթական չափորոշիչների բոլոր պահանջների կատարումը և այն կրթական ծրագրերի պահանջների իրականացումը, որոնց համար դրանք մշակվել են:
- 3.1.3. Ինստիտուտն իր բոլոր ուսանողներին տրամադրում է անհրաժեշտ պայմաններ պետական և ներքին կրթական չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի յուրացման համար՝ ներառյալ

որակավորված պրոֆեսորադասախոսական կազմ, գրադարանային և տեղեկատվական սպասարկում, սոցիալական աջակցություն:

3.1.4. Ինստիտուտն իր վրա է վերցնում պատասխանատվություն՝ իրականացնելու կրթության որակի շարունակական ապահովում որակի ապահովման մոնիթորինգի և այդ մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացման միջոցով:

3.1.5. Ինստիտուտում կրթության որակի ապահովման գործընթացը համապատասխանում է այն պահանջներին և սկզբունքներին, որոնք ձևակերպված են ENQA –ի կողմից մշակված «Եվրոպայի տարածքում բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների համար ստեղծված չափորոշիչներ և ուղղորդիչներ» փաստաթղթում:

3.1.6. Որակի ապահովման և ներքին չափորոշիչների ձևավորման գործընթացի բոլոր մակարդակներում ակտիվորեն ներգրավվում են բոլոր շահակից կողմերը՝ մասնակցային սկզբունքով:

3.1.7. Ինստիտուտի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում որակի ապահովման խնդիրներին՝ նպաստելու դասախոսների և ուսանողների հարգալից վերաբերմունքի ձևավորմանը Ինստիտուտի կողմից տրվող շնորհների, վկայականների և այլ խաստաթղթերի նկատմամբ:

3.2. Կրթության որակի ապահովման համակարգի առաքելությունը (բխում է բուհի առաքելությունից).

աջակցել բուհի որակի մշակույթի ձևավորման գործընթացին:

3.3. Կրթության որակի ապահովման համակարգի նպատակը.

աջակցել բուհի հանրային վստահության, պատասխանատվության, մրցունակության ապահովմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը:

3.4. Կրթության որակի ապահովման համակարգի խնդիրները.

3.4.1. Բացահայտել բուհի շահակիցների կարիքները և աջակցել դրանց բավարարմանը:

- 3.4.2. Աջակցել մասնագիտական կրթությունը որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացին:
- 3.4.3. Նպաստել մասնագիտական կրթության մատչելիությանը և իրականացման թափանցիկությանը:
- 3.4.4. Արժևորել շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման մշակման գործում:

4. Կրթության որակի ապահովման համակարգի չափորոշիչները

4.1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 4.1.1. Բուհն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:
- 4.1.2. Բուհի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:
- 4.1.3. Բուհում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

4.2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

- 4.2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանաններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:
- 4.2.2. Բուհի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:
- 4.2.3. Բուհը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

- 4.2.4. Բուհը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:
- 4.2.5. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):
- 4.2.6. Բուհում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:
- 4.2.7. Բուհում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

4.3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- 4.3.1. Բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
- 4.3.2. Բուհն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:
- 4.3.3. Բուհն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:
- 4.3.4. Բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

4.3.5. Բուհում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

4.4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

4.4.1. Բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

4.4.2. Բուհն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

4.4.3. Բուհը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

4.4.4. Բուհում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

4.4.5. Բուհում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

4.4.6. Բուհն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

4.4.7. Բուհում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

4.4.8. Բուհում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

4.5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

4.5.1. Բուհում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

- 4.5.2. Բուհի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:
- 4.5.3. Բուհը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:
- 4.5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ բուհն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:
- 4.5.5. Բուհը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:
- 4.5.6. Բուհում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:
- 4.5.7. Բուհն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

4.6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

- 4.6.1. Բուհում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:
- 4.6.2. Բուհն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:
- 4.6.3. Բուհն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:
- 4.6.4. Բուհը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:
- 4.6.5. Բուհում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

4.7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

- 4.7.1. Բուհում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:
- 4.7.2. Բուհը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:
- 4.7.3. Բուհում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:
- 4.7.4. Բուհի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:
- 4.7.5. Բուհում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:
- 4.7.6. Բուհը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:
- 4.7.7. Բուհում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

4.8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.8.1. Բուհն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:
- 4.8.2. Բուհն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:
- 4.8.3. Բուհում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

4.8.4. Բուհում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

4.9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ

4.9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով բուհում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

4.9.2. Բուհի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

4.9.3. Բուհն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

4.9.4. Բուհն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

4.10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

4.10.1. Բուհն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

4.10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով բուհը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

4.10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

4.10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

4.10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

4.10.6. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բուհի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով բուհի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար: